
ՊԱՌԼԱՄԵՆՏԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՇԻՌ

Մարտին Մանուկյան

Երևանի «Գլաժոր» համալսարանի իրավագիտության
ամբիոնի դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու
DOI: 10.63925/18294847-2025.op20-05

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել են պառլամենտի առաջացումը, զարգացումն ու ձևավորումն ընդգրկող պատմական ձևերը (փուլերը), բացահայտվել են պառլամենտի և պառլամենտարիզմի փոխկապակցվածության, պառլամենտարիզմի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության ձևի տեսաիրավական հիմքերը, առանձնացվել են պառլամենտին և պառլամենտարիզմին բնորոշ հատկանիշները, ինչպես նաև քաղաքական համակարգի (ռեժիմի) ու կառավարման ձևի առանձնահատկություններով պայմանավորված՝ ժամանակակից պառլամենտարիզմի տեսակները: Հոդվածի հեղինակը մանրամասնել է, որ պառլամենտարիզմի ձևավորումը տարբեր երկրներում կախված է եղել կոնկրետ պայմաններից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան գործոններից, որոնց հետևանքով առաջացավ ժողովրդական վետոն, ինչն ընդլայնում էր զանգվածների՝ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը: Հեղինակը փաստարկել է նաև, որ պառլամենտարիզմի էվոլյուցիան, նրա անցումը մի փուլից մյուսին պայմանավորված են հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային-հոգևոր փոփոխություններով: Յուրաքանչյուր փուլ, իրականացնելով իր պատմական առաքելությունը, նախադրյալներ է ստեղծում այլ որակական իրավիճակ տեղափոխվելու համար: Հեղինակի պնդմամբ՝ դրանում էական դեր է ունեցել նաև հասարակական միտքը:

Բանալի բառեր. Անտիկ ժամանակներ, չորսհարյուրի խորհուրդ, հինգհարյուրի խորհուրդ, սենատ, պառլամենտ, պառլամենտարիզմ, իշխանություն, դասային ներկայացուցչություն, քաղաքական համակարգ, պետական կառուցվածք, պառլամենտարիզմի հասուն ձևեր:

Պառլամենտն առաջացել ու ձևավորվել է որպես գործադիր իշխանության հակակշիռ¹: Այդուամենայնիվ, պառլամենտարիզմի ոչ բոլոր կողմնակիցներն են ընդունել օրենսդիր իշխանության գերակայությունը: Եթե Զ. Լոքը, Թ. Ջեֆերսոնը չէին ընդունում թագավորի՝ պառլամենտի հանդեպ իշխանության գերակայության գաղափարը, ապա Շ.Մոնտեսքյոն, Գ.Հեգելը, ապացուցելով պառլամենտի անհրաժեշտությունը և ինքնուրույնությունը, այն կախման մեջ էին դնում միապետից²:

Պառլամենտի առաջացումն ու ձևավորումն ընդգրկում են չորս պատմական ձևեր (փուլեր)՝ **անտիկ, դասային ներկայացուցչական, բուրժուական (բուրժուա-ցենզային), ժամանակակից:**

Առաջին փուլի ժամանակագրական շրջանակները ներգրավում են հնագույն ժամանակներից մինչև 12-րդ դարը: Այս փուլը բնութագրվում է որպես նախա (պրոտո) պառլամենտարիզմի դարաշրջան:

Ըստ Կ. Շմիդտի՝ «...պառլամենտի գոյության արդարացումն այն դատողությունն է, ըստ որի՝ անհնար է, որ բոլորը միևնույն ժամանակ միավորվեն մեկ վայրում, նաև անհնար է բոլորին հարցնել յուրաքանչյուր մասնավոր հարցի առթիվ, որի համար ավելի բանական կլինի դյուրացնել խնդիրը լիազորված անձանց կողեգիալ ընտրության միջոցով, իսկ դա հենց պառլամենտն է»³:

Չմանրամասնելով օրենսդրական գործընթացի նկարագրությունը հնագույն պետություններում՝ արձանագրենք միայն հետևյալ ընդհանուր բնութագրիչները.

Օրենսդրությունն արդի ըմբռնմամբ մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը դեռևս բացակայում էր: Դրան փոխարինում էին փարավոնների, արքաների հրամանները (էդիկտները Հռոմում), ինչպես նաև նրանց գլխավոր կառավարիչների հրամանները: Այլ խոսքով՝ օրենսդրությունը կրում էր բացառապես ավտորիտար բնույթ:

• Պետական կառուցվածքի, իրավական նորմաստեղծման հիմքը կազմում էին առասպելները թագավորների ու նրանց իշխանության աստվածային ծագման մասին: Ուստի պատահական չէ, որ իրավական նորմերի հիմնական մշակողները

¹ Տե՛ս **Авакьян С.А.** Парламентаризм в России: Идеи и решения // Вестник Моск. ун-та. Серия «Право», 2006, № 2, էջ 7-8:

² Տե՛ս **Нерсесянц В.С.** История политических и правовых учений. М., 2015, էջ 28:

³ Տե՛ս **Шмит К.** Политическая теология. М., 2000, էջ 183.

քրմերն էին:

- Իշխանության օրենսդիր ճյուղը գործարկվում էր որպես թագավորների, նրանց փոխանորդների, վարչական շրջանների կառավարիչների իշխանական իրավունքներից մեկը: Իրավական նորմաստեղծման մեջ գլխավոր սուբյեկտը թագավորն էր:

- Իրավական նորմաստեղծման մեջ կար թույլ ժառանգականություն. նորմերը, որոնք գործում էին մեկ կառավարչի ժամանակ, չեղարկվում էին նրա ժառանգի կողմից, կենտրոնացումը փոխվում էր ծայրաստիճան ապակենտրոնացմամբ, որն առաջացնում էր պետության կազմաքանդման սպառնալիք:

Հետազոտողների մեծ մասի կարծիքով՝ մ.թ.ա.1-ին հազարամյակի կեսերին Հին Հունաստանում ու Հին Հռոմում ձևավորվել էին՝ Սոլոնի ժամանակ՝ «Չորսհարյուրի խորհուրդը», Կլիսֆենի ժամանակ՝ «Հինգհարյուրի խորհուրդը», Սենատը Հին Հռոմում և այլն:

XII դարում սկսեցին զարգանալ պառլամենտական հաստատություններն Անգլիայում, ավելի ուշ հայտնվեցին Ժողովները՝ Իսպանիայում, հավաքները՝ Ֆրանսիայում: Քաղաքացիների կամ ընտրյալների այս ժողովների ժամանակ քննարկվում էին հարցեր, որոնք արդիական էին տվյալ տարածքի համար, նրա սահմանափակ սահմանները թույլ էին տալիս այդպիսի ժողովներ անցկացնել ավելի պարբերաբար: Աստիճանաբար դիտարկվող հարցերի շրջանակն ավելի պարզորոշ է գծագրվում, ավելի ու ավելի հաճախ քննարկման թեմա են դառնում համանշանակալից գործերը՝ ներառյալ պատերազմի ու խաղաղության հարցերը: Ժողովրդավարության այս ձևերը թեև դիտարկվում են որպես պառլամենտարիզմի պատմական նախատիպ ու դրա ձևավորման առաջին փուլ, սակայն, մեր կարծիքով, պառլամենտարիզմի՝ որպես գաղափարի և որպես ինստիտուտի պատմությունը կապ չունի անտիկ ժամանակների հետ: Թեպետ և այն եվրոպական քաղաքակրթության զարգացման համատեքստում, անշուշտ, ունի անտիկ ակունքներ: Քաղաքական ներկայացուցչության, առավել ևս՝ պառլամենտարիզմի գաղափարները, անտիկ ժառանգությունը մեծ ազդեցություն ունեցան պառլամենտարիզմի գաղափարախոսության և պրակտիկայի ձևավորման վրա:

Պառլամենտարիզմի զարգացման **երկրորդ փուլը** (XIII դարի սկիզբ - XVII դարի կեսեր) վերաբերում է այն ժամանակներին, երբ պառլամենտարիզմի առաջատար

տարրը (պառլամենտները) սկսում է ձեռք բերել պետական ներկայացուցչական ժողովի նշանակություն, և այս ժամանակներից ի վեր կարելի է խոսել «դասային-ներկայացուցչական պառլամենտարիզմի» ձևավորման մասին⁴: Այս փուլում Եվրոպայում ձևավորվում են պառլամենտարիզմի նախակարապետները՝ դասային ներկայացուցչական մարմինները՝ օրենսդրական և օրինախորհրդակցական իրավասություններով: Անգլիայում դա պառլամենտն էր, Ֆրանսիայում՝ գլխավոր շտատները, Իսպանիայում՝ գլխավոր կորտեսները, Ռուսաստանում՝ բոյարական դուման և Զեմսկի ժողովը: Հատկանշական է, որ եթե «պառլամենտ» եզրույթը XII դարի սկզբին անվանվել է նեղ ժողով արքաների շրջանում, ապա քաղաքային խավերի այդ ժողովի կազմի մեջ ընդգրկման ու նրանց լիազորությունների՝ պառլամենտի կողմից ընդլայնման արդյունքում այն դարձել է պետական գործերով պարբերաբար հավաքվող ներկայացուցչական ժողով⁵:

Առաջին տարեթիվն Անգլիայի պառլամենտի ստեղծման մեջ կարելի է համարվ 1215-ը, երբ Հովհաննես Անհող Մեծը ստորագրեց «Ազատությունների մեծ խարտիան»: Թագավորական իշխանությունը, որը թուլացել էր անգլո-ֆրանսիական պատերազմական անհաջողությունների պատճառով, հարկադրված եղավ գնալ զիջումների: Բարոնների ճնշման ներքո թագավորն իր ու իր ժառանգների կողմից ստանձնեց որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ առանց կոլեգիալ մարմնի համաձայնության հարկեր չսահմանելու պարտականություն: Այն ըստ էության թագավորական ընտրախավ էր, որը 1265 թ. անվանվեց պառլամենտ⁶:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ «Ազատությունների մեծ խարտիան» բավարար չէր հպատակների քաղաքական անվտանգության ապահովման համար, ուստի պառլամենտի անընդհատ աշխատանքի, նրա անդամներին անձեռնմխելիությամբ օժտելու անհրաժեշտություն առաջացավ:

1689թ. թագավորն ստորագրեց «Իրավունքների մասին հռչակագիրը» կամ «Իրավունքների մասին Բիլլը», որով պառլամենտը համարվեց պարբերաբար հրավիրվող պետական իշխանության մարմին⁷:

Ըստ «Բիլլի»՝ թագավորն իրավունք չունի՝ 1) առանց պառլամենտի համաձայ-

⁴ Տե՛ս **Барашков Т.М.** Парламенты мира. Саратов, «Наука», 2008, էջ 97:

⁵ Տե՛ս **Ковлер А.И.** Очерки по истории парламентаризма / Парламенты мира. М., 1991, էջ 618:

⁶ Տե՛ս Очерки парламентского права (Зарубеж. опыт): сб. ст. под ред. и с предисл. Б.Н.Топорнина. М., ИГПАН, 1993, էջ 178:

⁷ Տե՛ս **Романов А.К.** Правовая система Англии. М., 2000, էջ 129-130:

նության դադարեցնելու օրենքների գործողությունները, 2) որևէ մեկին ազատելու օրենքների ազդեցությունից, 3) թույլատրելու որևէ բացառում: Թագավորն առանց պառլամենտի համաձայնության չէր կարող իր կարիքների համար հավաքել որևէ հարկ: Նա զորահավաք կազմակերպելիս նույնպես հաշվի էր առնելու պառլամենտի համաձայնությունը: Պառլամենտի ընտրությունները պետք է լինեին ազատ: Պառլամենտում ապահովվում էր խոսքի և վիճաբանությունների ազատություն, այնտեղ ելույթ ունենալու համար հետապնդումը խստիվ արգելվում էր⁸:

Պառլամենտարիզմի **երրորդ փուլը** (XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարը) բնութագրվում է որպես բուրժուա-ցենզային կամ որպես դասական պառլամենտարիզմի ձևավորման ժամանակաշրջան: Դրա հայեցակարգայնացման գործում առավելագույն ներդրում ունեցավ նոր ժամանակների մտածողների աստղաբույլը՝ Ջոն Լոքը, Շառլ-Լուի Մոնտեսքյոն, Իերեմիա Բենտամը, Ջոն Ստյուարտ Միլը, Բենջամին Կոնստանը, Ալեքսիս դե Տոկվիլը, Թոմաս Հոբսը, Ժան-ժակ Ռուսոն և մյուսները: Նրանց աշխատություններում⁹ իշխանությունների բաժանման հիմնարար գաղափարն առաջադրելուց, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգում պառլամենտի գերակայության սկզբունքն ամրագրելուց բացի, ժողովրդական ներկայացուցչության ու օրինաստեղծման հիմնական գաղափարները դիտարկվում էին որպես բացարձակ իշխանության հիմնադրույթի հակոտնյա, որպես կառավարիչների ու ժողովրդի միջև հասարակական պայմանագրի ուսմունք (դոկտրին):

Ջ. Լոքի կարծիքով՝ ներկայացուցչական մարմնին վստահված օրենսդիր իշխանությունն ամենանախընտրելի տարբերակն է¹⁰, քանի որ դրանով ձևավորվում է ամբողջ բնակչության ընդհանուր վերաբերմունքն ընդունվող օրենքների նկատմամբ: Իշխանությունների բաժանմանը (տարանջատմանը) առնչվող ուսմունքը պառլամենտարիզմի հետ համադրվող գաղափարների մեջ է ընդգրկվել նաև Շ. Մոնտեսքյոյի «Օրենքների ոգու մասին» տրակտատում, իսկ պառլամենտարիզմի համար սկզբունքա-

⁸ St'u Билль о правах 1689 г. / Международные акты о правах человека. М., 2000, էջ 14:

⁹ St'u История политических и правовых учений. Учебник для вузов. 4-е изд. М., 2004, էջ 324-387:

¹⁰ St'u Правовая система Соединенных Штатов Америки. Автор: Уильям Берна. М., 2007, էջ 48-49: Նաև՝ **Daniel Farber, Susanna Sherry** A History of the American Constitution. West, 1990: Պետք է նշել, որ դրանից առաջ (1783 թ.) պառլամենտարիզմի գրեթե բոլոր տարրերն արտացոլվել էին հայկական ոչ պաշտոնական սահմանադրության մեջ՝ «Որոգայթ փառաց»-ում:

յին համարվող նախարարների պառլամենտական պատասխանատվության հարցը՝ Բ. Կոնստանի աշխատություններում:

Ջ. Միլլը, պառլամենտարիզմի կայացման դարաշրջանի անգլիացի այլ փիլիսոփաների նման (Ի. Բենտամը նրանից առաջ, իսկ Գ.Սպենսերը նրանից հետո), հիմնավորում էր պառլամենտարիզմը համընդհանուր օգտակարության (ռացիոնալիզմի) դիրքերից: Ներկայացուցչական կառավարման դերն ու նշանակությունը նա տեսնում էր ոչ այնքան ներկայացուցչական ժողովի կողմից պետությունը ղեկավարելու, որքան կառավարության գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու մեջ¹¹:

Լուսավորիչների գաղափարները հետագայում զարգացում ապրեցին Վ. Հեսսենի, Գ.Վ.Ֆ. Հեգելի, Ի. Կանտի և այլոց աշխատանքներում,¹² ու, չնայած հայացքների տարբերությանը, նրանք միակարծիք էին այն հիմնարար հարցերի շուրջ, որ պետության հիմնադիրը ժողովուրդն է, ու գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ըստ Վ. Հեսսենի՝ «... բուրժուական պառլամենտարիզմի ձևավորումն իրական էր բուրժուազիայի տիրապետող դաս դառնալու շնորհիվ, և միայն այս ժամանակներից ի վեր կարելի է խոսել պառլամենտարիզմի՝ որպես հասարակության կառավարման պետական համակարգի մասին, որը բնութագրվում է օրենսդիր ու գործադիր գործառնությունների պարզորոշ բաշխմամբ, պառլամենտի գերակա դերի ճանաչմամբ»¹²:

Հեգելը ևս, իր նախորդների՝ Լոքի, Մոնտեսքյոյի նման, իշխանությունների բաժանումը դիտում է իբրև հանրային ազատության հաստատման միջոց՝ առավել արդյունավետ համարելով ոչ թե իշխանության տարբեր թևերի հակադրումը միմյանց, այլև նրանց ներդաշնակ միասնությունը: Նա անհրաժեշտ էր համարում ֆրանսիացիներից վերցնել գլխավորը՝ ժողովրդի ազատության գաղափարը, մասնակցությունն ընտրություններին և որոշումների ընդունմանը: Գերմանիայում, նրա գնահատմամբ, այն ժամանակ չկար ազատության գործոնը, չկար կառավարման մարմինների պարտականությունների հստակ օրինակարգում, քանզի երկիրը կառավարվում էր առանց սահմանադրության: «Ազատությունը, եզրափակում է Հեգելը, գոյություն ունի այնտեղ, որտեղ գերիշխում է օրենքը, և ոչ թե մեկ անձի կամայականությունը»¹³:

¹¹ Տե՛ս **Милл. Дж.** Размышления о представительном правлении. СПб., 1863, էջ 84:

¹² Տե՛ս **Гессен В.М.** Основы конституционного права. Петроград: Юрид. кн. «Право», 1918, էջ 22.

¹³ **Гегель.** Работы разных лет. М., «Мысль», 1973, т. 2, էջ 31, 37, 281.

Կանտը ևս, պաշտպանելով ժողովրդի ինքնիշխանության գաղափարը, կարծում էր. «Որպեսզի ժողովուրդն իրավունք ունենա դիմադրելու իշխանություններին, պետք է լինի հանրային օրենք, իսկ դա նշանակում է, որ ժողովուրդը հպատակից պետք է վերածվի ինքնիշխանի»¹⁴: «Մարդու իրավունքները,- գրում է Կանտը,- «պետք է ճանաչվեն սրբազան՝ ինչպիսի զոհաբերություններ էլ դա պահանջի իշխանություններից»¹⁵:

Պառլամենտարիզմի ձևավորումը տարբեր երկրներում կախված է եղել կոնկրետ պայմաններից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան գործոններից, որոնց հետևանքով առաջացավ ժողովրդական վետոն, ինչն ընդլայնում էր զանգվածների՝ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը¹⁶: Բացի դրանից, այս փուլը բնութագրվում է Արևմուտքի երկրներում քաղաքական կուսակցությունների ստեղծմամբ ու ընտրական իրավունքի հաստատմամբ, իշխանությունների բաժանման տեսության իրականացմամբ, որում պառլամենտին՝ որպես օրենսդիր ու ներկայացուցչական մարմնի, տրվում է կարևոր ու հանգուցային դերակատարում:

Պառլամենտարիզմի էվոլյուցիան, նրա անցումը մի փուլից մյուսին պայմանավորված են հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային-հոգևոր փոփոխություններով: Յուրաքանչյուր փուլ, իրականացնելով իր պատմական առաքելությունը, ստեղծում է նախադրյալներ այլ որակական իրավիճակ տեղափոխվելու համար: Դրանում էական դեր է խաղացել նաև հասարակական միտքը, սակայն պառլամենտարիզմի տեսության ու պրակտիկայի միահյուսումը տեղի է ունեցել XIX-XX դարերի սահմանագծին, որը հետագայում հանգեցրել է պառլամենտարիզմի հասուն ձևերի առաջացմանը¹⁷:

Պառլամենտարիզմի **ժամանակակից կամ հասուն փուլը** բնութագրվում է պառլամենտական կառավարման նոր մոդելների (նմուշօրինակների) որոնմամբ և պետական կառավարման առաջատար, ժողովրդավարական համակարգի հաստատմամբ: Այս փուլում վերջնականապես ձևավորվում է պառլամենտարիզմի «ենթակառուցվածքը»՝ քաղաքական կուսակցությունները, ընտրական համակարգերը, քաղաքացիների

¹⁴ Кант И. Основы метафизики нравственности. М., «Мысль», 1999, էջ 698-699.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ст'ю Ковалевский М.М. От прямого народовластия к представительному и от патриархальной монархии к парламентаризму. Рост государства и его отражение в истории политических учений. М.: Тип. Т-ва И.Д. Сытина, 1906, էջ 22- 82:

¹⁷ Ст'ю Мишин А.А. Конституционное (государственное) право зарубежных стран. М., 1999, էջ 203-204:

ավելի ու ավելի լայն շրջանակների վրա տարածվող ընտրական իրավունքը, և, որպես դրանց հետևանք, Եվրոպայի քաղաքական քարտեզի վրա եղած պետություններում պառլամենտարիզմն ստանում է սահմանադրական ամրագրում¹⁸:

Պառլամենտի և պառլամենտարիզմի պատմական դասերի, դրանց զարգացման բարդ ու հետաքրքիր դինամիկայի, Պլատոնի, Արիստոտելի, Հեգելի, Կանտի, ապա՝ Զ.Լոքբի, Ժ.ժ.Ռուսոյի և Շ.Մոնտեսքյոյի տեսությունների հիման վրա շարունակաբար կատարվում են ընդհանրացումներ և եզրակացություններ:

Դրանք գալիս են փաստելու, որ համազգային ներկայացուցչական ինստիտուտ հանդիսացող պառլամենտները բազմադարյա պատմություն ունեն: Իշխանությունների տարանջատման հանրահայտ տեսությունը, որն այս կամ այն չափով արտահայտված է աշխարհի շատ երկրների սահմանադրություններում, պառլամենտներին օժտել է օրենդրական իշխանությամբ՝ դրանով իսկ առանձնահատուկ կարգավիճակի մեջ դնելով նրանց պետական մյուս մարմինների հետ հարաբերություններում: Դա իր հերթին կանխորոշել է Հիմնական օրենքների բովանդակությունը, որոնցում սահմանվում են պառլամենտների կազմակերպման կարգի, կառուցվածքի, իրավասության, պատգամավորների կարգավիճակի և գործունեությանն առնչվող մյուս հիմնահարցերը:

Այսօր պառլամենտները գործում են աշխարհի ավելի քան 200 պետություններում, որոնցից 70-ում գործում է երկպալատ, իսկ մնացածում՝ միապալատ համակարգեր, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը, ինչն ամրապնդվում է տարբեր երկրների պառլամենտների ղեկավարներին արված հարցման արդյունքներով:

Պառլամենտի ծագման ու զարգացման պատմությունը հարթ չի եղել: Թե՛ որպես ուսմունք (դոկտրին), թե՛ որպես ինստիտուտ, անցնելով բազմաթիվ փորձությունների միջով, այն մեկ ճգնաժամ չէ, որ ապրել է¹⁹: Իհարկե, իդեալական չէ և թերություններից զերծ չէ նաև դրա ժամանակակից վիճակը նույնիսկ այն երկրներում, որոնք արդարացիորեն իրենց անվանում են պառլամենտարիզմի օրրան:

Ինչպես նշում է սահմանադրագետ Կ.Սոկոլովը՝ «Պառլամենտական կարգերը գոյություն ունեն երկրի վրա, մարդկանց մեջ և մարդկանց համար, այդ թվում՝

¹⁸ St'au Southern European parliaments in democracy / ed. By C. Leston-Bandeira. London; New York: Routledge, 2005, էջ 191:

¹⁹ Ковлер А.И. Очерки по истории парламентаризма//Парламенты мира: сб, М.Интерпракс,1991.с.121

մոլորության մեջ գտնվող և սխալվող մարդկանց համար: Պառլամենտի՝ որպես պետական համակարգի քաղաքական բաղադրիչի գնահատման համար կարևոր է, թե ինչ աստիճան է այն նպաստում այդ մոլորություններին և սխալներին և ինչ չափով է վերացնում դրանց ազդեցությունը և կանխարգելում առաջացրած վնասը: Ինչպես և պետական կառավարման ցանկացած ձև, պառլամենտն էլ ունի իր յուրօրինակ «սահմանադրական» հիվանդությունները: Սակայն այդ հիվանդությունների հետ պառլամենտական երկրները հաշտվել են և հաշտվելու են, քանի որ պառլամենտի տված քաղաքական բարիքների ընդհանուր գումարը գերազանցում է այն անհարմարությունների գումարը, որոնք նա պատճառում է իր «օրգանական» թերությունների պատճառով»²⁰:

Պառլամենտական համակարգը ենթադրում է, որ ժողովուրդն է պետական իշխանության սկզբնաղբյուրը, իսկ պետական մարմինների, այդ թվում՝ պառլամենտի իշխանությունն արդեն ածանցյալ է ժողովրդի իշխանությունից:

Որպես ասվածի հաստատում՝ պետականագետ Մ.Բիխարին նշում է. «Իշխանությունը պատկանում է ոչ թե պառլամենտին, այլ ժողովրդին, պառլամենտական իշխանությունն այս դեպքում ընդամենը լիազորված իշխանություն է, քանի որ ինքնիշխան է միայն ժողովուրդը, իսկ պառլամենտը լոկ մարմնավորում է այդ ինքնիշխանությունը՝ որևէ փոփոխություն չմտցնելով ինքնիշխանության իրավունքների օբյեկտում»²¹:

Արդարացի պետք է համարել նաև ՌԴ Սահմանադրական դատարանի դատավոր Բ. Էբզենի դիրքորոշումը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, որը նշում է. «Ժողովուրդը պետության ներկայացուցչական մարմիններին է փոխանցում ոչ թե հենց իշխանությունն ինքը, այլ միայն այդ իշխանության նկատմամբ իրավունքը, այն իրականացնելու իրավունքը, ընդ որում՝ խիստ սահմանափակ ժամկետով: Ռուստի, ոտնձգությունը ժողովրդի իշխանության նկատմամբ, ժողովրդի լիիրավ իշխանության և դրա գերակայության նկատմամբ պետք է որակվի որպես իշխանության յուրացում: Ներկայացուցչական համակարգի թարմացումը, ինչպես դրա կազմակերպական ձևերի, այպես էլ ժողովրդական ներկայացուցիչների անհատական կազմի

²⁰ Соколов К.Н. Парламентаризм. Опыт правовой теории парламентского строя. СПб. 1912, էջ. 180.

²¹ Бихарин М. Парламентаризм// Мир политик. М. 1992, էջ .42

նորացման տեսակետից, միայն ժողովրդի իրավունքն է, որն իրականացվում է ազատ և պարբերական ընտրությունների միջոցով»²²:

Աշխարհի երկրների քաղաքական համակարգերում, քաղաքական համակարգի (ռեժիմի) ու կառավարման ձևի առանձնահատկություններով պայմանավորված, ժամանակակից պառլամենտարիզմը հանդես է գալիս «զարգացած», «սահմանափակ», «իմիտացիոն», «ռացիոնալիզացված», «մինիստերային», «բաժանված», «մոնիստական», «անավարտ», «հարաբերականորեն մաքուր» և այլ տարատեսակներով, որոնք միմյանցից տարբերվում են հանրային իշխանության ընդհանուր ծավալում օրենսդիր մարմնի, պետության գլխի և կառավարության ունեցած իշխանական լիազորությունների (իրավասությունների) տեսակարար կշռով²³: Այսպես՝

Զարգացած պառլամենտարիզմը կարող է գոյություն ունենալ միայն ժողովրդավարական հասարակությունում, որտեղ առկա են պառլամենտարիզմի այնպիսի հիմնարար տարրեր, ինչպիսիք են իշխանությունների բաժանման սկզբունքն ու իրավունքի գերակայությունը, պառլամենտարիզմի ավանդույթները, հասուն քաղաքական հասարակությունը և բազմակուսակցական համակարգը:

Սահմանափակ պառլամենտարիզմը բնութագրական է այնպիսի հասարակությանը, որտեղ թեև հռչակված են ժողովրդավարական հիմնական սկզբունքները, սակայն դրանց լիարժեքության աստիճանը և իրականացումը պատրանքային բնույթի են:

Իմիտացիոն պառլամենտարիզմի պայմաններում տեղի է ունենում իշխանության ու քաղաքականության մենաշնորհում, կառավարումն իրականացվում է կամայական ակտերով, նվազում կամ անկում է ապրում ներկայացուցչական ինստիտուտների ու ընդդիմության դերը, խախտվում է կուսակցությունների ու քաղաքացիական ինստիտուտների ինքնավարությունը և, որպես այդ ամենի հետևանք, առկա է պառլամենտարիզմի իմիտացիա:

Ռացիոնալիզացված պառլամենտարիզմը համատեղում է տարրեր, որոնք բնորոշ են կիսանախագահական կառավարման ձևին և ուղղված են նախագահական իշխանության ամրապնդմանը: Պառլամենտարիզմի այս տարատեսակն առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում: Դրա դեպքում ուժեղ նախագահական իշխանությունը հա-

²² Кокошкин Ф.Ф. Лекции по общему государственному праву. М., 1922. էջ .169

²³ Տե՛ս Парламенты: Сравнительное исследование структуры и деятельности представительных учреждений 55 стран мира / пер. с англ. М., «Прогресс», 1967, էջ 454:

մատեղվում է պառլամենտի՝ կառավարության գործունեությունը վերահսկելու հետ: Կառավարության երկակի պատասխանատվությունը նախագահի ու պառլամենտի առջև համարվում է պառլամենտարիզմի այս տարատեսակի բնորոշ գծերից մեկը:

Մինիստերային պառլամենտարիզմը հիմնվում է կառավարությունում համատեղելիության վրա՝ պատգամավորի մանդատի պահպանմամբ: Սա թույլ է տալիս կառավարությունում աշխատանքի ներգրավել ոչ միայն կառավարող կուսակցության (կուսակցությունների) ներկայացուցիչներին, այլև պառլամենտական մեծամասնության առավել ազդեցիկ պատգամավորներին ու դրանով իսկ վերահսկել պառլամենտը՝ ստանալով կուսակցական աջակցություն:

Բաժանված պառլամենտարիզմը բնորոշ է այնպիսի հասարակություններին, ուր հարաբերությունները պառլամենտի ու պետության գլխի միջև հիմնվում են իշխանությունների կոշտ բաժանման՝ նրանց ինքնուրույնության, զսպումների և հակակշիռների համակարգի փոխկապվածության վրա:

Մոնիստական պառլամենտարիզմը թեև հիմնվում է պառլամենտարիզմի նույն սկզբունքների վրա, սակայն այս տարատեսակի պայմաններում պետության գլուխը չունի քաղաքական իշխանություն:

Անավարտ պառլամենտարիզմի տարատեսակի դեպքում գործում է կառավարման ձևավորման պառլամենտական սկզբունքը, սակայն բացակայում է պառլամենտի առջև կառավարության քաղաքական պատասխանատվությունը:

Հարաբերականորեն մաքուր պառլամենտարիզմին բնորոշ են պառլամենտական կառավարումը և մոնիստիկ պառլամենտարիզմը, որոնք հենվում են պառլամենտի գերակայության վրա:

Չնայած պառլամենտարիզմի ժամանակակից տարատեսակների բազմազանությանը՝ պետք է արձանագրել, որ պառլամենտարիզմի մաքուր մոդելներ պետական պրակտիկան չի ճանաչում:

ПАРЛАМЕНТ КАК ПРОТИВОВЕС ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ

МАРТИН МАНУКЯН

преподаватель кафедры юриспруденции
Ереванского университета "Гладзор",
член Палаты адвокатов РА, адвокат,
кандидат юридических наук

Резюме В статье представлены исторические формы (этапы) возникновения, развития и становления парламента, раскрыта взаимозависимость парламента и парламентаризма, правовые основы парламентаризма как формы представительной демократии, выделены характерные черты парламента и парламентаризма, а также типы современного парламентаризма, обусловленные особенностями политической системы (режима) и формы правления. Автор статьи подробно рассматривает, что становление парламентаризма в разных странах зависело от конкретных условий и различных социально-экономических и политических факторов, в результате чего возникло народное вето, расширившее право народных масс на участие в управлении государством. Автор также утверждает, что эволюция парламентаризма, его переход из одной стадии в другую обусловлены политическими, социально-экономическими, культурными и духовными изменениями. Каждый этап, выполняя свою историческую миссию, создает предпосылки для перехода в иную качественную ситуацию. По мнению автора, значительную роль в этом сыграла и общественная мысль.

Ключевые слова: Античность, совет четырехсот, совет пятисот, сенат, парламент, парламентаризм, правительство, классовое представительство, политическая система, государственное устройство, зрелые формы парламентаризма.

PARLIAMENT AS A COUNTERBALANCE TO THE EXECUTIVE POWER

MARTIN MANUKYAN

Lecturer of the Department of Jurisprudence of the Yerevan University "Gladzor", member of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate, Candidate of Legal Sciences

Abstract. The article presents the historical forms (stages) of the emergence, development and formation of parliament, reveals the interdependence of parliament and parliamentarism, the legal foundations of parliamentarism as a form of representative democracy, highlights the characteristic features of parliament and parliamentarism, as well as the types of modern parliamentarism, conditioned by the peculiarities of the political system (regime) and form of government. The author of the article examines in detail that the formation of parliamentarism in different countries depended on specific conditions and various socio-economic and political factors, which resulted in the emergence of a popular veto, expanding the right of the masses to participate in government. The author also argues that the evolution of parliamentarism, its transition from one stage to another are conditioned by political, socio-economic, cultural and spiritual changes. Each stage, fulfilling its historical mission, creates the preconditions for the transition to a different qualitative situation. According to the author, social thought also played a significant role in this.

Keywords: Antiquity, Council of Four Hundred, Council of Five Hundred, Senate, Parliament, Parliamentarism, Government, Class representation, Political system, State structure, mature forms of parliamentarism.